ԹԵՄԱ 3 ԱՄԵՐԻԿԱ

ԴԱՍ 3.1. Հյուսիսային Ամերիկա: Ընդհանուր աշխարհագրական ակնարկ

• • •

Գնդաձևության գաղափարը կասկած չէր հարուցում, երկրագնդի չափերի վերաբերյալ հաշվարկներն էին սխալ: Պորտուգալիայի թագավոր Ժուան II-ը մերժեց Կոլումբոսի նախագիծը և նա տեղափոխվեց Իսպանիա: Ֆերդինանդ թագավորը նրան տրամադրեց 3 նավ՝ «Սանտա Մարիա», «Նինյա», «Պինտա»...

1492 թ հոկտեմբերի 12-ին հայտնաբերեցին մի կղզի, որն անվանեցին Սան Սալվադոր («Սուրբ Փրկիչ»): Նավապետը համոզված էր, որ հասել են Հնդկաստանի արևելյան ափերի մոտ գտնվող կղզիների, հատկապես որ բնությունն էլ նման էր Հնդկաստանի բնությանը: Դա էր պատճառը, որ կղզիներն անվանեցին Վեստ Ինդիա(Արևմտյան Հնդկաստան), բնակիչներին էլ հնդկացիներ:

... Նավապետը իր գրառումներում բնակիչների մասին նշում է, որ նրանք բնության հասարակ, բարեհոգի, ազնիվ, ու միամիտ երեխաներ էին, որոնք ասես ապրում էին ոսկե դարում և համարում, որ եկվորներն Աստծո կողմից են ուղարկված:

Կոլումբոսին հաջորդեցին շատ ճանապարհորդներ և հանգեցիան այն եզրակացության, որ դա Հնդկաստանը չէ: Իտալացի Ամերիգո Վեսպուչին (Էմերիգոս Վեսպուչիոս) ավելի քան 4000 կմ նավարկեց Հարավային Ամերիկայի ափերի երկայնքով և վստահորեն ասաց, որ այդպիսի երկար ափագիծ կարող է ունենալ միայն խոշոր ցամաքը: Դա է պատճառը, որ նոր աշխարհամասին շնորհեցին Ամերիկա անունը: